



198. ԱՄՄԵՆ ՀԻՆՉ ՏՂԸՄԱՐԹԻՆ ՇԸԵՌԻՔԵՆ Ա.

Շահօղլի Շահ-Արքասն ըխշարքես տարն ար: Սաղ ախշարքը նրան ենթարկվում ին, մինակ իրան կնանեթյը ենթարկվում չին: Մին օր Շահ-Արքասն իրան նազիր-վեզիրավը քյինամ ա շոռ կյալ: Մին հանգիւ զրադավ անց կընալիս եշում ըն, տընսում մին ռանչպար մարթ համ վար ա անում, համ էլ հետը պար կյամ՝ լոթ ա տամ, անց կենում որվելին էս դրազը, մինզին լոթ տամ, անց կենում էն դրազը: Շահ-Արքասն ասում ա.—Տըենաս էս մարթը հինչ հարստության, հինչ ապրուատի տեր ա, վըեր համ վար ա անում, համ պար կյամ: Նազիր-վեզիրն ասում ըն.—Տա իրան հինարը շի, կնգանը հինարն ա: Շահ-Արքասը շնրերը փոխած ա ինհամ: Էտ մարթին ծեն ա տամ կոշտը, ասում:—Տու հինչ կարողությա՞ն, հինչ ապրո՞ւատի, հինչ բա՞խտի տեր ըս, վըեր վար ընելին էլ ըս պար կյամ: Էտ մարթն ասում ա.—Հուր կնեզյ վըեր լավ ինի, միշտ էլ ուրախ կինի, տա իմ հինարըս շի, վըեր պար ըմ կյամ, կնգանըս հինարն ա: Շահ-Արքասը հըրցընում ա, թա կնեզյըտ հինչավ ա՞ լավ: Տա ասում ա.—Վըեր ուրծուգյումը վըրդտեղա քյինամ ըմ տոն, կյամ ա առաջըս, ծեռքես խորչինը դաստին եր օնում, ճուր ա տինհամ վըեններըս լուվանհամ, դաս-

տին հաց շինուած, շայ շինուած, քշերավն էլ խուրչինըս պըդրաստում, ինձ տանում հղի քցուած, ինքյն էլ տանը կենում, տանը պենը լոխ անում, ուրժուայինը կյամ ըմ տըեսնում ամման հինը պադրաստ: Շահ-Արբասն ասում ա.—Իմ իրեք կնեզյըս քեզ ըո՞ւ տըլական, մին խիլլա վլեսկե ել հետը, քու կնեզյըտ յոր օնեմ: Տա թա պա հունց կինի, վլեր իմ կնեզյըս ես տամ ուրժեցն: Շահ-Արբասը ուաերեն յափնչին եր ա օնում, էտ մարթը արդեն գյուղում ա իրան հետ խոսողը հու վա: Ասում ա.—Դե թաքավը եռու վլս, վլեր վլեսկեն էլ տասկեշ, հինչ պիտի անեմ, հունցը օզում ըս, ընենց էլ ըրա, մինակ էն կըլխան ես իմ կնգանըս պըկըսությունն ասեմ, տու էլ քու կնանուցըտ: Շահ-Արբասն ասում ա.—Իմ կընանուցըս մինին ծըեռքը կյող ա, մինը շատ լեզվանի յա, էն մինն էլ հինչ ա՞սեմ, կողի ես Շահ-Արբասն ըմ, սադ աշշարքն ինձանա վախում ա, տա աշկ չի ճպում, աշկը միշտ տուան ա: Ռանչպարն էլ իրան կնդանը պակասությունն ա ասում, կնանեցը փոխում ըն:

Էտ ռանչպարը շահեն կնանեցը եր ա օնում, տանում իրան տոն: Հղեցը մին կյետ ա պըտահում, էտ լեզվանի կնգանը քցուած ա կյետը, էրկուաին եր օնում, պիրում, տրանց հետե ճոկ-ճոկ օթաղնե սարքում, կյող կնգանը օթաղումը ըշկափնե տինուած, տալւլերքներավ, ըստըքններավ լրցնում, հանցու մին ըշկափան կյուղանա, տինի մինումը, էն մինան էլ կըտղանա, տինի էն մինումը, սադ օրը վախուր տրանավ անցկըցընե: էն մին կնգանը հետե յել սարքած օթաղնե մին տոռնը էրկուան ա շինում, հանցու վլեր կոշտը մարթ կյալիս մին տռնավը մտնե, էն մինավը տռնաւ կյա, ուրան աշկը տըեսնավըեց: Էտ կնանեցը հասկանում ըն, վլեր տըրա քշտին վլեշ մին պեն կարալ լրն անեն, իրար միշի խոսում ըն, վլեր իրանց սովորությունը թարգի տան:

Մին քանի տարե վլեր անց ա կենում, Շահ-Արբասն ասում ա.—Քյիննական ըմ տըեսնամ կնանեցըս հինչ ըն անում: Նաղիր-վեզիրին հետ կյամ ա տըեսնում կնանուցը մինը կավըեշ, էն էրկուան էլ թամամ փոխված: Շահ-Արբասը ոքնչպարեն հըցընում ա, տա ասում ա.—Էտ մինը քցալ ըմ կյետը, էս էրկուաին հետե յել ճոկ-ճոկ օթաղնե յըմ սարքալ, թողալ իրանց քյեփին, հինչ օզում ըն, թող անեն: Տրանա ետը տահանք իրանց սովորությունը թողում ըն: Շահ-Արբասը տրան ասում ա.—Կնանեցըս ինձ տու տանեմ, եք քու կնեզյըտ տար: Ռանչպարը թա տու վլս գյուղուած: